

Մարզպետ Կարեն Բոթոյանը խորհրդակցություն անցկացրեց մարզի դպրոցների տնօրենների հետ

26.06.2017

Հունիսի 26-ին Գեղարքունիքի մարզպետարանի նիստերի դահլիճում Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը մարզի դպրոցների տնօրենների հետ անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն: Մարզպետարանի աշխատակազմի ԿՄՄ վարչության պետ Գարիկ Բաղայանը ներկայացրեց ամփոփ տեղեկատվություն 2016-17 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի վերաբերյալ: Ջեկուցողը անդրադարձավ աշակերտների շարժի, առաջադիմության, ոլորտում իրականացված որոշ աշխատանքների և արձանագրված խնդիրների: Ըստ զեկուցման՝ հաշվետու ժամանակահատվածում մարզի հանրակրթության ոլորտում ընդգրկված են եղել 26 հազար 820 աշակերտ, որոնցից 126-ը՝ ներառական կրթության ուղղվածության դասարաններում: Ամփոփման արդյունքում գերազանցիկ սովորող աշակերտների թիվը մարզում կազմել է 23,9 տոկոս, հարվածային սովորող աշակերտների թիվը՝ 27, 45 տոկոս է միջակ սովորողների թիվը՝ 48,39 տոկոս: Վերջին ցուցանիշը մեզ մոտ մտահոգության տեղիք է տալիս, եւ իրավիճակը շտկելու համար մենք համատեղ պետք է լուրջ աշխատանք կատարենք, նշեց վարչության պետը: Խորհրդակցության ընթացքում անդրադարձ եղավ ՄԱԿ-ի «Պարենի Համաշխարհային ծրագրի», կողմից մարզի հանրակրթական դպրոցներում իրականացվող դպրոցական սնունդ ծրագրի ընթացքին: Դպրոցների տնօրեններին հանձնարարվեց դպրոցների ճաշարաններում հնարավորինս ապահովել պահանջվող չափանիշներով սահմանված սանիտար-հիգիենիկ նորմերը:

Հանդիպման ընթացքում լավեց նաև ԿԳ նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության զեկույցը Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ԿՄՄ վարչությունում և մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում 2017 թվականի հունվար, փետրվար ամիսներին անցկացված ուսումնասիրությունների վերաբերյալ: Մասնավորապես նշվեց, որ ուսումնասիրությունների ընթացքում ի հայտ են եկել մի շարք թերություններ և խախտումներ, որոնց վերացման ուղղությամբ ժամանակին տրվել են համապատասխան հանձնարարականներ: «Թվարկված խնդիրների զգալի մասն արդեն կարգավորվել, մնացածն էլ գտնվում են այդ փուլում», - նշեց մարզի կրթության վարչության պետը: Իր խոսքում կրթության պետական տեսչության պետ Արամ Կարապետյանը նշեց, որ կառավարության նոր ծրագրում ընդգրկված կրթության ոլորտի դրույթների իրագործումը դպրոցներին զերծ կպահի տարատեսակ խնդիրներից:

Ամփոփելով հանդիպումը Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը նշեց, որ հարկավոր է անել հնարավորը, մարզի կրթության ոլորտում արձանագրված թերությունները և բացթողումները շտկելու համար և մարզպետարանը պատրաստակամ է իր աջակցությունը ցուցաբերել այս հարցում: Ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած ավանդի և ուսումնադաստիարակչական աշխատանքները լավագույնս կազմակերպելու նպատակով մարզպետ Կարեն Բոթոյանը Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով խրախուսեց Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Գոհար Ենգոյանին: «Հայ ասպետ», հեռուստախաղում մրցանակային երկրորդ տեղ գրավելու համար Լիճքի միջնակարգ դպրոցի թիմը պարգևատրվեց «Հայ ասպետ», հեռուստախաղի պատվոգրով, որը տնօրեն Ալֆրեդ Սմբատյանին հանձնեց մարզպետ Կարեն Բոթոյանը: